

Շուշի. Յ. Խանլարեան.—«Որբացած ազգը» ինչպէս տեսնում էք այս համարում չկայ: Եթէ չենք սխալում, այս 6-րդ բանաստեղծութիւնն է ձերը, որ... չի տպւում: Այսուհետեւ տեսնենք:

Նախիջեւան. Լևոն Խանզադէ.—«Աւետարանի եղբայրները» վէպը ստացանք և կտպուի:

Թիֆլիս. Հ. Տ.—Ասում էք՝ «Աազմալիք» պապական թերթը մեզ հայույել է և թէ ինչու չենք պատասխանում: Մենք այդ թերթը չենք ստանում: Կարեք էլ չկայ ստանալ մի կեղոսո թերթ, որ միայն հայույել գիտէ: Բայց մխիթարեանների դիմակը պատուեց արդէն հայութեան առջև: ամբողջ տարի է հայկական աշխարհը արեան դաշտ է դառել թուրք հրոսակների ձեռքով, բայց նոքա իրանց երկու օրգաններով ոչ մի տող, ոչ մի կարեկցութեան նշոյլ ցոյց չտուին, նքան նստած Եւրոպայի կրծքում ճառ- ղաքականութեամբ կպարապեն կոր, ինչպէս կլայ եղեր, որ մեր մեծ ֆաղիշահը գիտնալ, թէ հայ կաթոլիկ պատերները կգրեն կոր թուրքերուն դէմ, ան ատեն իրենց թերթերուն մուտքը կարգելուի կոր Տաճկաստան, կը հասկնաք իշտէ»:—Մի հասիի խօսք էլ. Տաճկաստանում հայ ժողովրդի արեան գետեր հոսեցին. Ռուսաստանում ազգային աղէտը մաշեց մեր ժողովրդին. բանտ, տարա- գրութիւն, նահատակութիւն, հուր ու սուր մեծ հունձ գործեցին մեր տառապես ժողովրդի մէջ: Երևակայեցէք ոչ այնտեղ, ոչ այստեղ Վենետիկի հայ պատերների դաս- տիարակ զաւակների քիթն էլ չզղւեցաւ. և դեռ համար- ձակում են հայ անուն կրել իրանց վրայ: Հասկացմք:

Ուրմիա. Գ. Խոք.—«Արեան հայրենիք» բանաստեղծութիւնը ստացանք: Կաշիաստենք տպել:

Թիֆլիս. Հ. Տ.—Ա. Վ. Վրացերէնից թարգմանած բանաստեղծու- թիւնը ստացանք:

Թիֆլիս. Յ. Տէր Ման.—Միայն Դուք չէք շատ շատերը Զեղ նման այդ ինդրի առթիւ դիմել են մեզ նամակներով և անձամբ. Զեղ մեր տալիք պատասխանը թող կարդան և նոքա: Հարցնում էք՝ ինչու մեր շնորհալի քարոզիչ Տ. Բենիկ վարդապետը չի քարոզում վանաց մայր եկեղե- ղեցում, քանի որ ժողովրդի ցանկութեամբ վեհ. կաթողի- կոսն ու առաջնորդը նորան այդ պաշտօնին հրաւիրել են դեռ գարունքից: Այդ մասին առաջարկում ենք իմանալ կամ պ. Երեցփոխից, կամ առաջնորդարանից և կամ նոյն իսկ Հ. Բենիկից: Մենք ձեռնպահ ենք այդ ինսդիրը շօշ- փելուց և ինդրում ենք էլ չդիմել մեզ այդ հարցով:

Ախալցիա. Ս. Վ.—Նախորդ յօդուածը մենք չենք ստացել- այս վերջինը ստացանք կումայի լոյս տեսնելու նախօրը- կտնօրինենք: